



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՍԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ ՏՕՆԻՆ ԵՒ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՄՈՅ
ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՈՒՄԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

**«ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔՈՎ ՉԻՆՈՒՄԾ ԵՒ Ս. ՀՈԳԻՈՎ ՊԱՅԾԱՌԱՑԱԾ
 ՀԵՏԵԻՆՔ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՎԱՐՔԻՆ, ՈՐՊԵՍՉԻ ՆԱԵՒ ԻՐԵՆՑ ՊԵՍ
 ԱՐԺԱՆԻ ԸԼԼԱՆՔ ՓԱՌԱՑ ՏԵՐԸ ՏԵՍՆԵԼՈՒ»**

ՊԱՏԳԱՄԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ

Կիրակի, 4 Նոյեմբերի առաւօտուն, Ամենայն Սրբոց տօնին եւ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ հիմնադրութեան 44րդ տարեդարձին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. պատարագ մատուցուեցաւ Եկեղեցւոյ մէջ: Ս. պատարագը մատուցանեց Թեմիս Բարեշան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, իսկ Ս. Սեղանին սպասարկեցին Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիմեան եւ Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան: Աղօթակից էր նաեւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Թափօրը եկեղեցի մուտք գործեց «Հրաշափառ»ի երգեցողութեամբ: Երգեցողութիւնը կը կատարէին Եկեղեցւոյ Դպրաց դասը եւ Կիրակնօրեայի պատանի պարմանուհիները: Հաւատացեալներու բազմութիւնը երկիւղածութեամբ կ'ունկնդրէր ու կը մասնակցէր Ս. Պատարագի երգեցողութեան:

Իր քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն առաքեց Աստուծոյ, եւ օրհնեց յիշատակը բոլոր այն երախտաւորներուն, որոնք 44 տարիներ առաջ տեսիլքը եւ իմաստութիւնը ունեցան հիմնելու այս Եկեղեցին՝ ի շինութիւն եւ ի զարթնում շրջանի հայ համայնքի հոգեւոր կեանքին: Ապա, Սրբազան Հայրը մէջբերեց Ամենայն Սրբոց Նուիրուած շարականի հետեւեալ տուները, զորս միաժամանակ որպէս պատգամ եւ աղօթք բարձրացուց ըսելով. «Քու սուրբ տաճարիդ մէջ եւ քու սուրբերուդ բարեխօսութեամբը, քեզմէ խնդրողներուս պաղատանքը մի՛ անտեսեր, Տէ՛ր, Դուն որ յաւիտեան փառաւորուած ես: ... Փրկի՛ջ, անոնց աղօթքով ինայե՛ քու սուրբ Եկեղեցիիդ, զոր քու պատուական սուրբ արիւնովդ ստացար»: Սրբազանը շեշտեց այն ճշմարտութիւնը, թէ սուրբերը իրենց հաւատքով ու արիւնով վկայած են եւ իրենց կեանքերը նուիրաբերած՝ պաշտպանելու Զրիստոսի անունը եւ տարածելու քրիստոնէական լոյս հաւատքը: Անոնք իրենց մաքրամաքուր կենցաղով ու սուրբ վարքով Աստուծոյ մտերմութիւնը շահած են, Ս. Հոգիով լեցուած են եւ ընթացած Զրիստոսի գծած հետքերուն վրայէն: Եւ այսօր, անոնց ապրած կեանքը մեզի

համար օրինակ է, որպեսզի մենք ալ կարենանք մեր միտքերն ու շրթները մաքրելով՝ մեր հոգիներն ու սիրտերը մաքրագտելով ամեն տեսակի մեղանչական մտածումներէ, խորհուրդներէ ու խօսքերէ, արժանի ըլլանք իրենց նման ստանալու փառքի պսակը, որ Տէրը իբրեւ գնահատանք պիտի տայ բոլոր արդարներուն: Արդ՝ «Աստուծոյ խօսքով զինուած եւ Ս. Յոգիով պայծառացած հետեւինք սուրբերու վարքին, որպեսզի նաեւ իրենց պէս արժանի ըլլանք փառաց Տէրը տեսնելու», պատգամեց Սրբազանը:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Յօր գլխաւորութեամբ, թափօրը առաջնորդուեցաւ «Աւետիսեան» սրահ, ուր եկեղեցւոյս Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած էր մատաղը: Կատարուեցաւ մատաղօրհնէք:

Սրբազան Յայրը օրհնեց եւ բարձր գնահատեց Տիկնանց Միութեան եւ Յոգաբարձութեան անդամներուն մատուցած ծառայութիւնը, ինչպէս նաեւ մատաղին իրենց նիւթաբարոյական օժանդակութիւնը բերած բոլոր հաւատացեալները:

Աւարտին՝ Սրբազան Յօր «Պահպանի»ով եւ «Կիլիկիա» ու «Մեր Յայրենիք» մաղթերգներու կատարումով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը, որմէ ետք հաւատացեալները կարգով մօտեցան եւ վերցուցին մատաղի իրենց հրամցուած բաժինը եւ հոգենորոգ ուրախութեամբ վերադարձան իրենց տուները:

Նշենք, որ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, ու նախաձեռնութեամբ հոգաբարձութեան, Շաբաթ, 3 Նոյեմբերի երեկոյեան, եկեղեցւոյ կից »Աւետիսեան« սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ հիւրընկալութեամբ Տէր եւ Տիկին Լեւոն եւ Մարի Արապեան ամուլին: Հանդիսութեան ընթացքին, հոգաբարձութեան ատենապետ Տիար Լեւոն Արապեան արժանացաւ յատուկ յուշանուէրի մը, եկեղեցւոյ իր մատուցած բազմամեայ ծառայութեան համար:

Պ.Վ.Կ.

DURING DIVINE LITURGY ON ALL SAINTS' DAY AND THE NAME DAY OF HOLY MARTYRS CHURCH

“FORTIFIED BY THE WORD OF GOD AND ENLIGHTENED BY THE HOLY SPIRIT, LET US LIVE IN THE EXAMPLE OF OUR SAINTS SO THAT WE MAY ALSO BE WORTHY OF SEEING ALMIGHTY GOD”

ADVISED THE PRELATE

On Sunday, November 4th, All Saints' Day as well as the name day and 44th anniversary of Holy Martyrs Church of Encino was commemorated by Episcopal Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who was assisted at the altar by Very Rev. Fr. Barthev

Gulumian and Rev. Razmig Khatchadourian. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the services.

The Prelate began his sermon by giving thanks and glory to God and by blessing the founders of the church who 44 years ago had the vision and wisdom to establish this church. Referencing the hymn dedicated to All Saints' Day, the Prelate emphasized that our saints have attested with their faith and blood and devoted their lives to protecting Jesus' name and spreading the Christian faith. With their piety they received God's favor, were filled with the Holy Spirit and continued on the path Jesus had set. The way they lived their lives should be an example for us to purify our minds and mouths and to absolve our hearts and souls of all sinful thoughts and ideas so that we may also be worthy of the crown of glory which the Lord bestows to the righteous. Therefore, "fortified by the Word of God and enlightened by the Holy Spirit, let us live in the example of our saints so that we may also be worthy of seeing Almighty God", advised the Prelate.

At the conclusion of services the Prelate was led in a procession to "Avedissian" Hall where the blessing of *madagh* took place. The Prelate commended the parish Ladies Auxiliary, who had prepared the *madagh*, and the Board of Trustees for their service and the parishioners who had contributed financially to the preparation.

The service concluded with the Prelate's benediction and the collective singing of "Giligia" and Armenia's national anthem.

The banquet in celebration of the name day of the church took place under the auspices of the Prelate on the evening of Saturday, November 3rd, at "Avedissian" Hall. The banquet was hosted by Mr. and Mrs. Levon and Mary Arabian and organized by the Board of Trustees. In honor of his decades long service to the church Mr. Arabian was presented with a memento during the banquet.